ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՆՈՒԷՐՆ ԱԳՈՒԼԵԱՑ ՎՆԱՍՈՒԱԾՆԵՐԻՆ։

Ագուլիսի հեղեղի գոյժը Ս. Էջմիածին հասած լինելով Սինոդը չընայելով Մայր Աթոռոյս դրամական անձուկ դրութեան, թշուառացելոց վիշտը ամոքելու համար անցեալ Յուլիս ամսին հինգ հարիւր բուբլի ուղարկեց յանուն Ագուլեաց վնասուածներին նպաստելու համար կազմած յանձնաժողովին, յորդորելով որ Յանձնաժողովը աշխատէ ամենայն եռանդեամբ և արդիւնաւորութեամբ շարունակել նպաստահաւաքումն կարօտեալներին օգնելու և սփոփելու համար։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ։

Յաւելք սրտի կարդացինք «Մշակ» 65 համարում «իմ բացատրութիւնս» վերնագրով առաջնորդող յօդուածը, որով թերթի խմբագիրը համառօտակի յիշելով իւր կայքերի և կալուածների գրաւիլը պարտքի տեղ՝ յայտնում է որ Մշակը գոնէ երկու ամսով դադարելու է։ Յօդուածը վերջանում է հետևեալ վհատական խօսքերով «տասն և երեք տարուայ գրական գործունէութիւնից յետոյ Հայոց հասարակութեան համար, այժմ կորցնելով իմ ամբողջ կարողութիւնս, այս բոպէիս ինքներս հարց է առաջարկվում թէ Մշակի գոյութեան և թէ իմ անձնական ապրուստի մասին»։

—

Սինոդը Բաքուի գործակալի տարեցոյց Մարտի 30 ին յայտարարութեան հետ սաստաւ նոյն քաղաքի բնակիչ Պ. Խաչատուր Կիրիանից 10 բուբլի, ի նպաստ Ճեմարանի։ Յիշեալ պարոնը խոստացել է նոյն քանակութեամբ նուէրը շարունակել այսուհետև ամեն տարի։

Աստուած ի հաճոյս իւր ընդունի յիշեալ պարոնի նուէրը և վարձատրէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

—

Սաստանք Սինոդից հրատարակելու հետևեալ նուիրատուաց ցուցակը, որ յանուն Ճեմարանի անվանաց մնացած նուիրատոմների հետ Տփխունցի Արժ. Ներսէս քահանայ Ղամպղեան անցեալ Դեկտմ. 22 ին ուղարկել է Սինոդին։

	Ր.
Պ. Յարութիւն Պետրոսեան Հախվերդեանց . . .	25
Պ. Յովսէփ Պասանանց	5
Օրիորդ Ովսաննայ Մարգսեան Ալէքսանեանց . . .	5
« Կատարինէ	5
Պ. Ալէքսանդր	5